

5.4. Դժբախտ պատահարները արտադրությունում 2014 թվականին

Ըստ հանրապետության կազմակերպություններում աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների վերաբերյալ ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, աշխատանքի անվտանգության նորմերի խախտման պատճառով 2014թ. արձանագրվել է 55 արտադրական դժբախտ պատահար: 1 000 աշխատողի հաշվով (նրանց թվաքանակը հաշվարկված է ըստ ներկայացված հաշվետվություններում բերված աշխատողների միջին ցուցակային թվաքանակների) տուժածների տեսակարար կշիռը կազմել է 0.5:

Դժբախտ պատահարների դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

	Դեպքերի քանակը, միավոր		Տուժածների թվաքանակը, մարդ		նրանցից՝ մահացածներ	
	ընդամենը	դրանցից, երբ միաժամանակ տուժել են 2 և ավելի մարդ	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	15	1	17	2	3	-
Արագածոտն	-	-	-	-	-	-
Արարատ	1	-	1	-	-	-
Արմավիր	2	-	2	-	-	-
Գեղարքունիք	-	-	-	-	-	-
Լոռի	4	-	4	-	-	-
Կոտայք	4	-	4	1	2	1
Շիրակ	3	-	3	-	1	-
Սյունիք	26	-	26	1	3	-
Վայոց ձոր	-	-	-	-	-	-
Տավուշ	-	-	-	-	-	-
Ընդամենը ՀՀ	55	1	57	4	9	1

Աշխատունակությունը 1 և ավելի օրով կորցրած անձանց 2014թ. ավարտված ժամանակավոր անաշխատունակության հիման վրա հաշվարկված անաշխատունակ մարդ-օրերի գումարային քանակը կազմել է 1 909:

Դժբախտ պատահարների հետևանքով ՀՀ Արարատի, Շիրակի և Սյունիքի մարզերում 1-ական տղամարդ դարձել է II խմբի հաշմանդամ:

Դժբախտ պատահարի հետևանքով աշխատունակությունը մասամբ կորցրած 2 տղամարդ հիմնական աշխատանքից փոխադրվել է այլ աշխատանքի:

Աշխատանքի գնալու և աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին տեղի է ունեցել, համապատասխանաբար՝ 1 և 3 դեպք:

Աշխատանքի գնալու և աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին դժբախտ պատահարների դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

	Աշխատանքի գնալու ճանապարհին			Աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին		
	դեպքերի քանակը, միավոր	տուժածների թվաքանակը, մարդ ընդամենը	նրանցից՝ կանայք	դեպքերի քանակը, միավոր	տուժածների թվաքանակը, մարդ ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	1	1	-	-	-	-
Կոտայք	-	-	-	1	1	1
Սյունիք	-	-	-	2	2	-
Ընդամենը ՀՀ	1	1	-	3	3	1

2014թ. հանրապետությունում աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, որոնք տրվում են տուժողին կամ տուժողի մահվան դեպքում դրա իրավունքն ունեցող անձանց, կազմել են 232.2 մլն. դրամ: Աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը կազմել է 1 361.6 մլն. դրամ:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, 2014թ.

մլն. դրամ

	Ընդամենը
Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	152.1
Կորցրած աշխատավարձի փոխհատուցում	45.0
Միանվագ նպաստ	9.0
Բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգման ծախսեր	20.0
Այլ ծախսեր	6.1
Ընդամենը	232.2

Աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը, 2014թ.

մլն. դրամ

	Ընդամենը
Հատուկ արտահագուստի ձեռք բերման համար	741.5
Անհատական պաշտպանության միջոցառումների վրա	601.5
Այլ ծախսեր	18.6
Ընդամենը	1 361.6